

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	6
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	9
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	14
ԱՄՓՈՓՈՒՄ.....	16

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կորոնավիրուսային համավարակի հետևանքով աշխարհի գրեթե բոլոր տնտեսություններում 2020 թվականին գրանցված խոր անկումներից հետո համաաշխարհային տնտեսությունը 2021թ. առաջին կիսամյակում թևակոխել է տնտեսական աճի վերականգնման փուլ, ինչին նպաստել է թե՛ երկրների որդեգրած հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացումը, թե՛ համավարակի աստիճանական թուլացումը (հիմնականում պայմանավորված պատվաստանյութերի լայնորեն կիրառմամբ) և թե՛ գլոբալ տնտեսական որոշ երևույթներ, ինչպիսին, օրինակ՝ հումքային ապրանքների շուկայում որոշ ռեսուրսների միջազգային գների բարձրացումն է:

ՀՀ տնտեսությունում 2020 թվականի տարեվերջի արդյունքներով գրանցված տնտեսական բավական խոր անկումից (-7.4%) հետո 2021 թվականի առաջին կիսամյակում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նախնական գնահատականներով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է 4.9% իրական տնտեսական աճ: Ընդ որում, 4.9% տնտեսական աճին ծառայությունների նպաստումը կազմել է 1.8 տոկոսային կետ, առևտրինը՝ 1.0 տոկոսային կետ, իսկ գյուղատնտեսության, արդյունաբերության և շինարարության նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.5, 0.4 և 0.2 տոկոսային կետ:

Այդուհանդերձ, իրական ՀՆԱ-ի 4.9% աճը չի կարելի որակել որպես տնտեսության վերականգնում՝ հաշվի առնելով մի կողմից՝ 2020-ին գրանցված խոր անկումից հետո տնտեսությունում ձևավորված խիստ ցածր բազային արդյունքների նկատմամբ այս տարվա աճի իներցիոն գործոնը (տնտեսագիտական համայնքում հայտնի է որպես «բազայի էֆեկտ») և մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ տնտեսության վերականգնման վերաբերյալ խոսուն գնահատականներ հնչեցնելու համար անհրաժեշտ է աճի ցուցանիշները դիտարկել նախաճգնաժամային տարվա ցուցանիշների համեմատությամբ, այսինքն՝ վերացարկվել բազայի էֆեկտից: **Այսպես, 2021 թվականի առաջին կիսամյակում գրանցված իրական ՀՆԱ-ի 4.9% աճը չի հանգեցրել տնտեսության վերականգնման, բազայի էֆեկտը չի հաղթահարվել, ինչի արդյունքում առանց բազայի էֆեկտի գրանցվել է իրական ՀՆԱ-ի անկում, որը կազմել է -0.9%:** Հատկանշական է, որ առանց բազայի էֆեկտի՝ շինարարության ոլորտում գրանցվել է -26.6% անկում, իսկ առևտուրը կրճատվել է 4.2%-ով:

Ինչ վերաբերում է **տնտեսական ակտիվության ցուցանիշին (SUՑ)¹**, ապա նկատենք, որ 2021 թվականի հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ տնտեսությունում գրանցվել է SUՑ-ի 5.0% աճ: Այդուհանդերձ, ճգնաժամից հետո տնտեսության թողարկման ծավալների վերականգնման տեմպը 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ոչ միայն չի արագացել, այլև գնալով ավելի է թուլացել: Փաստացի, 2021թ. ապրիլին գրանցված բավական բարձր՝ 23.2% տնտեսական ակտիվության ցուցանիշից հետո, մայիս ամսին SUՑ-ը կազմել է 10.9%, իսկ հունիսին՝ 8.0%: Տնտեսության վերականգնման տեմպի դանդաղումը բավական մտահոգիչ է, քանի որ այն չի բացատրվում միայն օբյեկտիվ պատճառներով (օրինակ՝ կորոնավիրուսային համավարակի և Արցախյան պատերազմի թողած ծանր տնտեսական հետևանքները), այն ունի նաև սուբյեկտիվ բաղադրիչ՝ կառավարության նկատելի ցածր կատարողական արդյունավետությունը, ինչը սրում է ՀՀ տնտեսության թուլացած ներուժի խնդիրը և հանգեցնում վերականգնման գործընթացի զսպման:

Այսպես, 2021թ. հունվար-հունիսին թողարկման ծավալների աճի տեմպը թուլացել է տնտեսության բոլոր ճյուղերում, ինչն ուղեկցվել է նաև ներքին պահանջարկի թույլ վերականգնմամբ: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսական ակտիվության աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի ցածր աճերով (նպաստումները SUՑ-ին՝ համապատասխանաբար 1.3 և 0.9 տոկոսային կետ): Տնտեսության մյուս՝ շինարարության, գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի նպաստումները SUՑ-ի աճին եղել են շատ ավելի համեստ՝ կազմելով համապատասխանաբար 0.8, 0.8 և 0.5 տոկոսային կետ: Տնտեսության տարբեր հատվածներում գրանցված զարգացումների վերաբերյալ մանրամասներին կանդրադառնանք ստորև:

Արդյունաբերության թողարկման ծավալների աճն ապրիլից հետո նկատելիորեն թուլացել է և հունիսին կազմել 1.3%, ինչի արդյունքում հունվար-հունիսին գրանցվել է ընդամենը 2.1% աճ, որին 1.4 տոկոսային կետով նպաստել է «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ենթաճյուղի աճը: «Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում», և «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերում գրանցված աճերը ևս որոշակի դրական նպաստում են ունեցել արդյունաբերության համախառն թողարկման աճին (համապատասխանաբար 1.3 և 0.1 տոկոսային կետով): Միաժամանակ, պայմանավորված արտաքին պահանջարկի նվազմամբ, արդյու-

¹ Պետք է չփոթել *տնտեսական աճի* հետ, որը ցույց է տալիս *համախառն ավելացված արժեքի* աճը տվյալ ժամանակահատվածում, իսկ *SUՑ-ը* ցույց է տալիս *համախառն թողարկման* աճը:

նաբերության աճին 0.7 տոկոսային կետով հակազդել է «Մշակող արդյունաբերություն» ենթաճյուղի կրճատումը:

Շինարարության աճի տեմպը ևս 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում կտրուկ դանդաղել է, ինչի արդյունքում հունվար-հունիսին աճը կազմել է 10.8%, այն դեպքում երբ ապրիլ և մայիս ամիսների կուտակային աճը կազմել է համապատասխանաբար 20.3% և 14.3%: Ընդ որում, շինարարության աճը հիմնականում պայմանավորված է եղել պետական բյուջեի (նպաստումը՝ 10.3 տոկոսային կետ) և բնակչության (նպաստումը՝ 4.4 տոկոսային կետ) միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճերով: Մինչդեռ կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումը 5.8 տոկոսային կետով հակազդել է ընդհանուր շինարարության աճին:

Ծառայությունների ոլորտում նույնպես նկատվել է աճի տեմպի դանդաղում, ինչի արդյունքում հունվար-հունիս ամիսներին աճը եղել է բավական համեստ՝ 2.7%՝ հիմնականում պայմանավորված «Կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 3.2 տոկոսային կետ), ինչպես նաև «Տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճով: Այդուհանդերձ, «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի նվազումը զգալիորեն (8.9 տոկոսային կետով) հակազդել է ընդհանուր ծառայությունների աճին:

Առևտրի ոլորտում, ինչպես և տնտեսության քննարկված մյուս ճյուղերում, չի հաջողվել պահպանել աճի արագ տեմպը, որի արդյունքում ապրիլին գրանցված 47.8% 12-ամսյա աճից հետո հունիսին աճը կազմել է ընդամենը 10.3%, իսկ հունվար-հունիսի կուտակային աճը եղել է 8.0%՝ հիմնականում պայմանավորված մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 7.2 տոկոսային կետ):

Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքի կուտակային աճը հունվար-հունիսին կազմել է 6.5%, ինչը հիմնականում պայմանավորված է եղել բուսաբուծության աճով (նպաստումը՝ 7.2 տոկոսային կետ): Այդուհանդերձ, ճյուղի ընդհանուր աճին 0.9 տոկոսային կետով հակազդել է անասնաբուծության նվազումը:

Պահանջարկի տեսանկյունից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունում տեղի ունեցած զարգացումները ևս միանշանակ չեն:

Թեև սպառումն առաջին կիսամյակում իրական արտահայտությամբ աճել է շուրջ 5.4%-ով, սակայն եթե վերացարկվենք բազայի էֆեկտից, ապա իրականում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է սպառման անկում՝ -1.9%-ի չափով: 5.4% աճը հիմնականում պայմանավորված է եղել մասնավոր հատվածում անցած տարվա ընթացքում կուտակված խնայողությունների բարձր մակար-

դակով, իսկ տնօրինվող եկամտի աճը եղել է բավական համեստ: Նկատենք նաև, որ սպառման վերականգնման վրա բացասական ազդեցություն է ունեցել սպառողական վարկավորման նվազումը: Կարևոր է փաստել, որ ներկայիս իշխանությունների վարած տնտեսական քաղաքականության հետևանքով նախաճգնաժամային վերջին տարիներին տնտեսական աճը գլխավորապես բացատրվում էր սպառումով, իսկ դա իր հերթին՝ սպառողական վարկավորման ծավալների շեշտակի աճով՝ պայմանավորված հասարակության տարբեր շերտերում ապագայի նկատմամբ ձևավորված դրական սպասելիքներով: Այս համատեքստում սպառողական վարկավորման նվազման ներկայիս միտումները հուշում են, որ սպառողների վարքագծում տեղի են ունենում փոփոխություններ, ինչի արդյունքում վերջիններս դրսևորում են որոշակի զգուշավորություն, և լավատեսական սպասումներն այլևս չեն բնութագրում նրանց վարքը:

Ինչ վերաբերում է կապիտալ (հիմնական միջոցներում) ներդրումներին, ապա նկատենք, որ այս ուղղությամբ իրական աճը 2021թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է շուրջ 9.6%, իսկ առանց բազայի էֆեկտի գրանցվել է 11.9%-ի չափով իրական անկում: Մյուս կողմից, 9.6% աճը պայմանավորված է եղել ոչ թե մասնավոր, այլ պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով: Մասնավոր ներդրումները, հակառակ պետականի, նվազել են, սակայն պետական ներդրումների բարձր աճը հակազդել է մասնավոր ներդրումների նվազմանը: Մասնավոր ներդրումների նվազումը բավական մտահոգիչ է՝ հաշվի առնելով վերջին տարիներին այս մասով գրանցված անկումները և մասնավոր ներդրումների ցածր մակարդակը: Տնտեսության ներուժի վերականգնման գործում մասնավոր ներդրումների կրճատման այս միտումը երկարաժամկետում կարող է հանգեցնել շատ ավելի բացասական հետևանքների:

Պահանջարկի թույլ վերականգնման ֆոնին 2021թ. առաջին կիսամյակում **առևտրային հաշվեկշիռը** ցուցաբերել է բարելավման միտում (10.9%-ով): Այդուհանդերձ, այս բարելավումը գլխավորապես պայմանավորված է ներմուծման համեմատ արտահանման առաջանցիկ աճով և չի բացատրվում տնտեսության մրցունակության բարձրացմամբ: Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում թուլացել է և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների (դոլարային արտահայտությամբ) աճի տեմպը, որոնք հունվար-հունիս ամիսներին կազմել են համապատասխանաբար 23.3% և 7.9%: Նկատենք նաև, որ հաշվետու ժամանակահատվածում իրական դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճը շատ ավելի թույլ է՝ երկուսինն էլ 5.5%: Արտահանման անվանական դոլարային աճը հիմնականում պայմանավորված է եղել մետաղների միջազգային գների աճով:

12-ամսյա գնաճը 2021 թվականի հունիսին կազմել է 6.5%՝ գերազանցելով ՀՀ կենտրոնական բանկի նպատակային՝ (4 +/- 1.5%) ցուցանիշը: 2021 թվականի հունվար-հունիս ամիսներին գնաճի և գնաճային սպասումների արագացմանը հակազդելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքն ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով (նախորդ տարվա դեկտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս բարձրացվել էր 1.0 տոկոսային կետով)՝ սահմանելով 6.5%, թեև գնաճը դրանից դեռևս չի մեղմվել:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2021թ. առաջին կիսամյակում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի համեմատ աճել է 5.4%-ով՝ կազմելով 196,440 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 3.9%-ով՝ կազմելով 168,347 դրամ, իսկ ոչ պետականում՝ 5.9%-ով և կազմել է 209,937 դրամ²: **Իրական աշխատավարձը** 2021 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5.7% կուտակային գնաճի պայմաններում նվազել է 0.3%-ով:

Այսպիսով, ըստ վերը նկարագրվածի՝ կարող ենք նշել, որ թեև ՀՀ տնտեսությունը թևակոխել է աճի տիրույթ, տնտեսության վերականգնում դեռևս տեղի չի ունեցել: Ավելին, տնտեսության ակտիվացումն օր օրի արագանալու փոխարեն տեղի է ունենում ավելի ու ավելի դանդաղ տեմպերով: Տնտեսության տարբեր ճյուղերում գրանցված աճերը հիմնականում պայմանավորված են 2020-ին գրանցված խոր անկումներով և արտացոլում են բազայի էֆեկտը: Մյուս կողմից, թեև նկատվել է բնակչության տնօրինվող եկամտի աճ, բարձր գնաճի պայմաններում իրական աշխատավարձերը կրճատվել են, ինչն ուղեկցվել է նաև սպառողական վարկերի նվազմամբ: Մասնավոր ներդրումների ներկայիս մակարդակը և դրա դինամիկան ևս խոստումնալից չեն:

² Մեջբերված են ԱՐՄՍՏՍՏ-ի կողմից ներկայացված նախնական տվյալները:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի եկամուտների վրա համավարակի և Արցախյան պատերազմի թողած բացասական ազդեցությունը երկրորդ եռամսյակից սկսած փոքր-ինչ թուլացել է, և տնտեսության դանդաղ վերականգնմանը զուգահեռ նկատվել է պետական բյուջեի եկամուտների աճի միտում:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	697.9	738.0	790.9	107.2%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	665.0	696.7	750.2	107.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	11.6	15.1	4.3	28.8%
Այլ եկամուտներ	21.3	26.2	36.3	138.7%

Հաշվետու ժամանակահատվածում եկամուտները որոշակիորեն գերակատարվել են թե՛ բյուջեով նախատեսված պլանի, թե՛ ճշտված պլանի նկատմամբ: Ընդ որում, ընդհանուր եկամուտների մասով գերակատարումը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 7.2%, իսկ հարկային եկամուտների մասով՝ 7.7%: Պետք է փաստենք, որ եկամուտների գերակատարումը ոչ թե տնտեսությունում գեներացված հավելյալ արժեքի հետևանք է, այլ հիմնականում պայմանավորված է եղել բարձր գնաճային միջավայրով, ինչը չէր կանխատեսվել պետական բյուջեի մշակման ժամանակ (2021թ. բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական կանխատեսումներով՝ 2021թ. միջին գնաճը կանխատեսվել էր ընդամենը 1.9%):

2021 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 10.3%-ով և կազմել 790.9 մլրդ դրամ: Ընդհանուր եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) 10.3% աճով, ինչի արդյունքում այն կազմել է 750.2 մլրդ դրամ:

Հարկային եկամուտների աճը 2021թ. առաջին կիսամյակում հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 13.6% կամ շուրջ 29 մլրդ դրամ), մաքսատուրքի (աճը՝ 42.4% կամ 12.7 մլրդ դրամ) և շահութահարկի (աճը՝ 11.8% կամ 11.5 մլրդ դրամ) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները հարկային եկամուտների 10.3% աճին կազմել են համապատասխանաբար 4.3, 1.9 և 1.7 տոկոսային կետ: Ընդ որում, նշվածներից միայն ԱԱՀ-ի մասով հարկային մուտքերի աճն է բացատրվում տնտեսական ակտիվությամբ: Մաքսատուրքերի աճը պայմանավորված է եղել ԵԱՏՄ երկրների ընդհանուր ներմուծման աճով, իսկ շահութահարկի գծով գրանցված աճը բացատրվում է օրենսդրական փոփոխություններով, որոնց համաձայն 2020թ. առաջին կիսամյակում հարկատուներն ազատվել են շահութահարկի կանխավճար իրականացնելու պարտավորությունից:

Հարկային եկամուտների աճին 1.4 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել նաև սոցիալական վճարների աճը (90.5% կամ 9.8 մլրդ դրամ), ինչը սակայն կրկին կապված է օրենսդրական փոփոխությունների հետ, որոնց համաձայն՝ տարեսկզբից բարձրացվել են սոցիալական վճարների դրույքաչափերը: Հարկային եկամուտների աճը նաև զսպվել է ակցիզային հարկի մուտքերի 16.9% (8.9 մլրդ դրամ) նվազմամբ, որի նպաստումը կազմել է -1.3 տոկոսային կետ: Վերջինս պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, որոնց համաձայն՝ 2021 թվականի տարեսկզբից բարձրացվել են որոշ ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը:

Պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները 2021թ. առաջին կիսամյակում գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 1.9 մլրդ դրամով և կազմել մոտ 4.3 մլրդ դրամ: Այդուհանդերձ, բյուջեի ճշտված պլանի համեմատ դրանք կատարվել են ընդամենը 28.8%-ով: Այսինքն՝ կառավարությունը չի ստացել ավելի քան 10.7 մլրդ դրամի նախատեսված դրամաշնորհ, ինչը նշանակում է, որ վերջինս չի կատարել դրանց ստացման համար անհրաժեշտ և կանխավ դոնորների հետ համաձայնեցված նախապայմանները: Մասնավորապես, չեն ստացվել բյուջեով սահմանված 7 ծրագրերի շրջանակներում նախատեսված 1.4 մլրդ դրամ դրամաշնորհները, իսկ 11 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 42%-ով, որոնք կազմել են շուրջ 4 մլրդ դրամ:

Բյուջեի այլ եկամուտների գծով մուտքերը 2021թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի են 6.9%-ով կամ 2.3 մլրդ դրամով և կազմում են 36.3 մլրդ դրամ: Այլ եկամուտները ճշտված պլանի նկատմամբ գերակատարվել են 38.7%-ով (10.1 մլրդ դրամով): Կատարողականի բարձր ցուցանիշը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում

բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացվող
տոկոսավճարներով:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Պետական բյուջեի ծախսերը 2021 թվականի առաջին կիսամյակում աճել են՝ պայմանավորված պետական բյուջեով նախատեսված, ինչպես նաև կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված հակաճգնաժամային միջոցառումների և Արցախյան պատերազմի հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի իրականացմամբ: Լրացուցիչ (բյուջեով չնախատեսված) ծախսերի կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ զգալիորեն ճշգրտվել են բյուջեի և՛ ընթացիկ, և՛ կապիտալ (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) ծախսերի պլանները:

Այսպես, պետական բյուջեի ընդհանուր ծախսերը կազմել են 866.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 13.2%-ով: Այս ցուցանիշը բավական մոտ է բյուջեի նախնական պլանային ցուցանիշին, սակայն ճշտված պլանի ցուցանիշից պակաս է ավելի քան 133 մլրդ դրամով: Սա նշանակում է, որ կառավարության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է նախապես չպլանավորված ծախսերի իրականացմամբ, իսկ պլանավորվածները թերակատարվել են: Հետևանքը ճշտված պլանի համեմատ ընդհանուր ծախսերի 13.4%-ով թերակատարումն է: Նշենք նաև, որ առաջին կիսամյակի ծախսային պլանում կատարված ճշտումից (123.2 մլրդ դրամի չափով) 35.8 մլրդ դրամը ժամանակային տեղափոխումների արդյունք է, այսինքն՝ այն տեղի է ունեցել հաջորդ եռամսյակների համար նախատեսված գումարների հաշվին:

Պլանի ճշտման զգալի մասը (մոտ 83.2 մլրդ դրամ) բաժին է ընկել ընթացիկ ծախսերին՝ ներառելով Արցախյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված ծախսերը, կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հակաճգնաժամային ծրագրերի տնտեսական միջոցառումների իրականացումը և առողջապահությանն ուղղված լրացուցիչ ծախսերը: Փաստացի ընթացիկ ծախսերը կազմել են 789.3 մլրդ դրամ և ճշտված պլանի համեմատ թերակատարումը կազմել է 10.2%:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) գծով տարեկան պլանը ճշտվել է ընդամենը 5.7 մլրդ դրամով, իսկ առաջին կիսամյակի պլանը՝ գրեթե 40 մլրդ դրամով, պարզ է դառնում, որ կապիտալ ծախսերի մասով նույնպես կատարվել է պլանային ցուցանիշի զգալի վերանայում հաջորդ ամիսների համար նախատեսված ծախսերի հաշվին: Կապիտալ ծախսերի ճշտված պլանը կազմել է մոտ 121 մլրդ դրամ՝ նախօրոք ծրագրավորված 81 մլրդ դրամի փոխարեն: Փաստացի իրականացված կապիտալ ծախսերը կազմել են 77.1 մլրդ դրամ և կատարվել են ճշտված պլանի ընդամենը 63.7%-ի չափով: Հաշվի առնելով վերջին տարիներին կապիտալ ծախսերի թերակատարման չլուծված խնդիրը, այս տարվա կատարողականի ցուցանիշը կրկին

փաստում է, որ կապիտալ ծրագրերի կառավարման խնդիրը շարունակում է մնալ արդիական: Ընդ որում, հիմնականում ցածր կատարողական է արձանագրվել արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի մասով, որոնց շրջանակներում օգտագործվել է կիսամյակային ծրագրված միջոցների 51.7%-ը: 2020թ. առաջին կիսամյակի համեմատ կապիտալ ծախսերն աճել են 68.4%-ով, որը սակայն հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ ՊՆ շենքային պայմանների բարելավմանն ուղղված ծախսերի աճով:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ
Ընդամենը ծախսեր	876.8	1,000.0	866.4	86.6%
Ընթացիկ ծախսեր	795.8	879.0	789.3	89.8%
Աշխատանքի վարձատրություն	82.3	81.3	75.6	93.0%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	91.4	91.1	69.7	76.5%
Տոկոսավճարներ	90.5	90.5	87.1	96.3%
Սուբսիդիաներ	64.1	65.3	59.0	90.4%
Դրամաշնորհներ	78.8	103.4	90.1	87.1%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	262.6	312.0	297.2	95.3%
Այլ ծախսեր	126.1	135.5	110.5	81.6%
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	81.0	121.0	77.1	63.7%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	81.0	121.0	77.7	64.3%
Հիմնական միջոցներ	81.0	121.0	77.7	64.3%
Շենքեր և շինություններ	68.3	102.2	72.8	71.3%
Մեքենաներ և սարքավորումներ	10.3	12.6	4.2	33.7%
Այլ հիմնական միջոցներ	2.5	6.2	0.7	11.0%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	0.0	0.0	-0.6	-

Ընթացիկ ծախսերից 75.6 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը կազմել է կիսամյակային

ծրագրի 93%-ը և 1.8%-ով (1.3 մլրդ դրամով) գերազանցել է նախորդ տարվա առաջին կիսամյակի ցուցանիշը:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2021 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 76.5%-ը՝ 69.7 մլրդ դրամ, որը 5.5%-ով կամ 3.6 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման և շարունակական ծախսերի աճով:

Կառավարության պարտքի սպասարկմանն առաջին կիսամյակում տրամադրվել է 87.1 մլրդ դրամ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 96.3%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 53.1 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, շուրջ 34 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը, որոնք կազմել են ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 98.8%-ը և 92.7%-ը: **Նկատենք, որ կառավարության պարտքի սպասարկման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 11.0%-ը, իսկ ընդհանուր ծախսերի 10.1%-ը, ինչն արդեն զգալի բարձր է և պայմանավորված է կառավարության պարտքի աճող ծավալներով:**

ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 174 ծրագրերի իրականացում 46 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: ՀՀ կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում առաջին կիսամյակում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 176, որոնցից փաստացի միջոցներ են օգտագործվել 168-ի գծով, ընդ որում ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 853 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել է 726-ը կամ 85.1%-ը:

Նկատենք նաև, որ 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեով իրականացված ծրագրերի շարքում կատարման արդյունավետության տեսանկյունից զգալի շեղումներ են գրանցվել «Ճանապարհային ցանցի բարելավում», «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում», «Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում», «Ներդրումների և արտահանման խթանում», «Ոռոգման համակարգի առողջացում», ինչպես նաև «Քաղաքային զարգացում» ծրագրերի մասով, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 43.0%, 47.5%, 48.1%, 51.5%, 54.3% և 68.3%: Նշված ծրագրերի համար ընդհանուր նախատեսվել էր իրականացնել 53.5 մլրդ դրամի չափով ծախս, սակայն դրանից կատարվել է ընդամենը 27.6 մլրդ դրամ: Ընդ որում, այս ծրագրերը հիմնականում կապիտալ ծախսերի բնույթ են կրում, և դրանց

թերակատարումը ևս մեկ անգամ ընդգծում է երկարաժամկետ տնտեսական աճի և տնտեսության ներուժի ընդլայնման հարցում ներկայիս կառավարության ծախսողաժ քաղաքականությունը:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները: Կորոնավիրուսային համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների հակազդմանն ու մեղմմանն ուղղված միջոցառումները ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում շարունակվել են:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է իրականացնել շուրջ 22.9 մլրդ դրամի չափով ծրագրեր: Փաստացի ծախսը կազմել է շուրջ 19.8 մլրդ դրամ (թերակատարումը՝ 13.8%), որոնց կազմում առողջապահական ծրագրերին ուղղված ծախսերը կազմել են 13.1 մլրդ դրամ, տնտեսական աջակցության ծրագրերը՝ 5.9 մլրդ դրամ, 725.9 մլն դրամ ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, իսկ 1 մլն դրամը՝ սոցիալական պաշտպանությանը: Բացի այս ծախսերը, նշված նպատակով կառավարությունը դուրս է գրել 5.75 մլրդ դրամի չափով բյուջետային վարկ:

Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման ուղղությամբ իրականացված ծախսերը կազմել են շուրջ 41.1 մլրդ դրամ, որից սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 39.0 մլրդ դրամ: Ընդ որում, նախատեսվել էր իրականացնել 45.0 մլրդ դրամի չափով ծրագրեր, արդյունքում նշված ուղղությամբ իրականացված ծախսերը թերակատարվել են 8.6%-ով: Հատկանշական է, որ թե՛ առաջին կիսամյակի, թե՛ տարեկան պլանով Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման նպատակով ի սկզբանե ծախսեր չեն նախատեսվել, և 45 մլրդ դրամը ներառվել է բյուջեի միայն ճշտված պլանում:

Այսպիսով արձանագրենք, որ կառավարության ծախսային քաղաքականությունը հաշվետու ժամանակահատվածում հիմնականում կրել է իրավիճակային բնույթ և, չունենալով նախապես մշակված ու կանխամտածված իրատեսական պատկեր, գործել է իրադրությանը պարզապես հակազդելու տրամաբանությամբ: Այս մասին է վկայում պետության համար այժմյան կարևորագույն սոցիալ-տնտեսական և անվտանգային խնդիրների մասով (կորոնավիրուսային համավարակի և Արցախյան պատերազմի առաջացրած ծանր հետևանքները, պետական պաշտպանական համակարգի խարխիլվածությունը և այլն) իրականացված ծախսերի՝ մեծամասամբ միայն բյուջեի ճշտված պլանում ներառված լինելու հանգամանքը: Մինչդեռ նշված ուղղություններով անհրաժեշտ ծախսերի իրականացումը կանխատեսելի էր դեռևս 2020 թվականից և դրանք պետք է արտացոլված լինեին նաև բյուջեի նախնական պլանային ցուցանիշներում: Ընդ որում, այդ ծախսերի մի մասն իրականացվել է բյուջեի հաջորդ եռամսյակների համար նախատես-

ված ծախսային միջոցների հաշվին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ծախսերի իրականացումը դեռևս արդիական է լինելու այս տարվա մյուս կեսին, կարող ենք ենթադրել, որ անհրաժեշտություն է առաջանալու բյուջեի պլանը տարվա ընթացքում կրկին ճշգրտել:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2021թ. առաջին կիսամյակում հարկաբյուջետային քաղաքականության նպատակը եղել է հարկաբյուջետային կայունության ապահովումը՝ միաժամանակ աջակցելով տնտեսական վերականգնմանը և աճի տիրույթ վերադարձին: Վերոգրյալ նպատակի իրականացման համար թեև հարկաբյուջետային քաղաքականությունը առաջին եռամսյակում եղել է խթանող, այդուհանդերձ, պայմանավորված ծախսերի թերակատարմամբ՝ խթանման չափն աստիճանաբար թուլացել է և առաջին կիսամյակի արդյունքներով այն գնահատվում է զսպող: Այսպես, համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2021թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ունեցել է -0.5 չափով զսպող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների +0.1 չափով չեզոք և ծախսերի -0.6 չափով զսպող ազդեցություններով:

Վերոհիշյալ զարգացումների արդյունքում պետական բյուջեն եղել է պակասուրդային: 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 75.5 մլրդ դրամ պակասուրդ (դեֆիցիտ)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 48.9 մլրդ դրամի դիմաց:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 2021թ. առաջին կիսամյակում, մլրդ դրամ

	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ	697.9	738.0	790.9	107.2%
Ծախսեր	876.8	1,000.0	866.4	86.6%
Պակասուրդ	179.0	262.0	75.5	28.8%

Նկատենք, որ պակասուրդի փաստացի մակարդակը ցածր է եղել թե՛ բյուջեի նախնական, թե՛ ճշտված պլանի ցուցանիշից, ինչի արդյունքում ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 28.8%: Բյուջեի առաջին կիսամյակի համար ծրագրվածից ցածր պակասուրդը մասամբ բացատրվում է եկամուտների 52.9 մլրդ դրամի չափով փաստացի գերակատարմամբ: Այդուհանդերձ, առավել նշանակալի գործոն է եղել 133.6 մլրդ դրամի չափով բյուջեի ծախսերի թերակատարումը, որը կազմում է փաստացի պակասուրդի՝ ճշտված պլանից շեղման չափի 71.6%-ը:

ՀՀ պետական պարտքը 2021թ. հունիսի 30-ի դրությամբ դրամային արտահայտությամբ կազմել է 4,393.5 մլրդ դրամ, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 8,869.0 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՀ

պետական պարտքի ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են անհամաչափորեն (համապատասխանաբար 18%-ով և 14.9%-ով): Դա պայմանավորված է եղել 2020 և 2021թթ. առաջին կիսամյակների վերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքների 2.7% տարբերությամբ (482.44-ից աճել է մինչև 495.37 դրամ): ՀՀ պետական պարտքում 4,161.6 մլրդ դրամը (8,400.9 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է ՀՀ կառավարության պարտքը, 231.9 մլրդ դրամը (468.1 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ ԿԲ արտաքին պարտքը:

2021թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը 2020-ի տարեվերջի համեմատ աճել է 5.5%-ով կամ 229.2 մլրդ դրամով (դոլարային արտահայտությամբ՝ 11.3% կամ 900.6 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքն աճել է 6.1%-ով կամ 237.7 մլրդ դրամով (դոլարային արտահայտությամբ՝ 11.9% կամ 892.4 մլն ԱՄՆ դոլար):

2021թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը 2020-ի տարեվերջի համեմատ աճել է 618.2 մլն ԱՄՆ դոլարով (10.2%), որից կառավարության արտաքին պարտքը կազմում է 610.1 մլն ԱՄՆ դոլարը: Նկատենք նաև, որ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը դրամային արտահայտությամբ նվազել է 3.5%-ով կամ 8.5 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ աճել է 1.8%-ով կամ 8.1 մլն ԱՄՆ դոլարով:

Հիշեցնենք, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը՝ կազմելով 63.5%: Այդ կապակցությամբ 2021թ. առաջին կիսամյակում՝ հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգն ապահովելու համար ՀՀ կառավարությունը 2022-2024թթ. ՄԺԾՓ փաստաթղթի հետ միասին հաստատել և Ազգային ժողով է ներկայացրել «ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագիրը»: Հատկանշական է, որ պարտքի բեռի նվազեցման ծրագրում, հիմնական թիրախներին հասնելու համար նախատեսվող միջոցառումները նշված չեն: Մասնավորապես, չի նշվում, թե ինչ միջոցառումների հաշվին է նախատեսվում ավելացնել հարկային եկամուտները, կամ ինչ կապիտալ ծախսեր են նախատեսվում իրականացնել տնտեսական աճի արագացման նպատակով: Այս բացթողումները նվազեցնում են ծրագրի իրատեսականությունը և վստահությունը դրա արդյունավետ իրականացման հարցում³:

³ Պարտքի նվազեցման ծրագրի վերաբերյալ ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ «Լոյս» հիմնադրամի կողմից ներկայացված վերլուծական աշխատանքում, որը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3D3Odbl>:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում թեև տնտեսությունը թևակոխել է աճի տիրույթ, այդուհանդերձ, 2021թ. առաջին կիսամյակում չի հաջողվել գրանցել տնտեսության վերականգնում: Ավելին, տնտեսության ակտիվացման գործընթացը բավական դանդաղ է ընթանում՝ ՏԱՑ-ի աճի տեմպը վերջին ամիսներին զգալիորեն դանդաղել է բոլոր ոլորտներում: Այս երևույթը մի կողմից բացատրվում է 2020 թվականին տեղի ունեցած բացասական իրադարձությունների (կորոնավիրուսային համավարակ և Արցախյան պատերազմ) առաջացրած և մինչև օրս շարունակվող ծանր սոցիալ-տնտեսական հետևանքներով, մյուս կողմից՝ կառավարության բացթողումներով ու ցածր կատարողական արդյունավետությամբ:

Տնտեսության ճյուղերում 2021թ. հունվար-հունիս ամիսներին գրանցված թողարկման ծավալների աճը հիմնականում բացատրվում է բազայի էֆեկտով, այսինքն՝ պայմանավորված է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում գրանցված խոր անկումից հետո տնտեսության որոշակի աշխուժացմամբ: Ընդ որում, արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել հանքարդյունաբերական գործունեության ակտիվացմամբ, այնինչ մշակող արդյունաբերության ուղղությամբ զարգացումներն անկումային են եղել: Շինարարության աճին մասնավորապես նպաստել է պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճը, մինչդեռ կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալները կրճատվել են, ինչը բավական լուրջ բացասական ազդակ է տնտեսության համար և փաստում է, որ բիզնես միջավայրը Հայաստանում ոչ միայն չի բարելավվում, այլև առկա անորոշությունների պատճառով այն անկում է ապրում:

Նույն տրամաբանությամբ կապիտալ (հիմնական միջոցներում) ներդրումների աճը հիմնականում բացատրվում է պետական ներդրումների աճով, իսկ մասնավոր ներդրումները նվազել են, ինչը երկարաժամկետում կարող է հանգեցնել տնտեսության ներուժի տուգանմանը՝ հաշվի առնելով այս ուղղությամբ թե՛ ներկայումս ստեղծված իրավիճակը և թե՛ վերջին տարիներին ներդրումների կրճատման տեմպերն ու ցածր մակարդակը:

Իրական աշխատավարձը հաշվետու ժամանակահատվածում նվազել է, ինչը զարմանալի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անվանական աշխատավարձերի աճին հակազդել է գնաճի շատ ավելի բարձր ցուցանիշը, ինչի արդյունքում միջին ամսական անվանական աշխատավարձի գնողունակությունն ընկել է: Նկատենք նաև, որ սպառողական վարկավորման ծավալները ևս կրճատվել են, ինչը վերջին տարիներին գրանցված շեշտակի աճերի համատեքստում խոսում է

սպառողների վարքագծում տեղի ունեցած փոփոխությունների, մասնավորապես՝ ապագայի հանդեպ դրական սպասելիքների թուլացման մասին:

Հարկաբյուջետային արդյունքները ևս մտահոգիչ են: Թեև հարկաբյուջետային կայունության ապահովման և տնտեսության վերականգնման համար հարկաբյուջետային քաղաքականությունը 2021թ. առաջին եռամսյակում եղել է խթանող, այդուհանդերձ, 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներով համախառն պահանջարկի վրա այն գնահատվում է զսպող:

Մտահոգիչն այն է, որ կառավարության կողմից խթանող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու դրդապատճառները (համախառն պահանջարկի վերականգնում, տնտեսության ներուժի բարձրացում և այլն) հաշվետու ժամանակահատվածում չեն փոխվել, սակայն կիսամյակի արդյունքներով կառավարությանը չի հաջողվել պահպանել տնտեսության խթանման տեմպերը, հակառակը՝ իրականացված հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում համախառն պահանջարկի աճը զսպվել է: Սա իր հերթին հիմնականում բացատրվում է բյուջեով նախատեսված ծախսերի թերակատարմամբ (թեև բյուջեի եկամուտները նախատեսվածից փոքր-ինչ ավելի են կազմել) և խոսում է կառավարության ցածր կատարողական արդյունավետության մասին:

Ընդ որում, թերակատարվել են հիմնականում կապիտալ ծախսերը, ինչը բացարձակապես համահունչ չէ տնտեսությունը վերականգնելու կառավարության տեսլականի և հասարակությանը հաղորդվող դրական ազդականների հետ, իսկ հետճանաչմամբ առկա իրավիճակում խորապես վտանգում է տնտեսության ներուժի ավելացման, վերականգնման տեմպի արագացման և երկարաժամկետում կայուն տնտեսական աճ ապահովելու հրամայականի իրագործումը: Նկատենք նաև, որ կառավարության ցածր կատարողականի, ավելի կոնկրետ՝ ստանձնած հանձնառությունները ժամանակին և ամբողջապես կատարելու անկարողության արդյունքում կառավարությունը չի ստանում նախատեսված օտարերկրյա դրամաշնորհները և ավելի է դանդաղեցնում տնտեսության վերականգնման գործընթացը:

Կառավարության ցածր կատարողականը, վերոգրյալ խնդիրներին զուգահեռ, զգալիորեն բարդացնում է կառավարության պարտքի կառավարման խնդիրը՝ հաշվի առնելով մի կողմից դրա ներկայիս բարձր մակարդակը և աճող վարքագիծը, մյուս կողմից՝ պարտքի նվազեցմանն ուղղված կառավարության ծրագրի անիրատեսականությունը: Ստեղծված իրավիճակը այսպիսի տեմպերի պահպանման պարագայում կարող է խորացնել պարտքային ճգնաժամի շուրջ ձևավորված ռիսկերը, սրել տնտեսության թուլացած ներուժի վերականգնման և դիմադրողականության ամրապնդման խնդիրը և անհնարին դարձնել մոտ ապագայում հավա-

նական բացասական շուկերի (օրինակ՝ կորոնավիրուսային համավարակի նոր ալիք, անվտանգային խնդիրների սրացում և այլն) ի հայտ գալու պարագայում առանց լուրջ կորուստների դրանց դիմագրավման հրամայականը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: